ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Էքսպեր. և կլինիկ. բժշկ. հանդես

VI, № 4, 1966

Журн. экспер. и клинич. медицины

Ա. Ա. ԼԱԼԱՅԱՆ

# ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի 60-ական թվականները Կովկասի բժիշկների, այդ թվում նաև հայ բժիշկների համար, նշանավորվեց ջանքերի միավորման առաջին լուրջ քայլով՝ Կովկասյան բժշկական ընկերության ստեղծմամբ։ Այդ ընկերությունը ստեղծվեց 1864 թվին Թիֆլիսում։ Նա ստեղծվեց այն մարդկանց ջանքերով, որոնք Կովկասի պայմաններում ցանկանում էին չկտրվել բժշկության առաջընթացից, ձգտում էին օգտագործել բոլոր միջոցները ժողովրդի առողջապահությանը ծառայելու համար։

Կովկասում կային բոլոր պայմանները, որպեսզի բժիշկը ամբողջովին կտրվեր բժշկության առաջընթացից։ Եթե իբրև բացառություն մի կողմ թողնենք Թիֆլիսը՝ Կովկասի ադմինիստրատիվ, կուլտուր-լուսավորական կենտրոնը, ապա Կովկասի մյուս վայրերում մասնավորապես քաղաքներից դուրս ապրող բժիշկները վերը նշված իմաստով շատ ծանր պայմաններում էին գտնվում։ Բայց չնայած դրան, նրանք չէին ուզում կտրվել բժշկության առաջընթացից, քանի որ բժշկական բարձրագույն դպրոցներում այնպիսի լուրջ կրթություն էին ստացել և այնպիսի ոգով դաստիարակվել, որի հետ անհամատեղելի էր բժշկության արհեստավորի վիճակին անցնելը։

Առաջավոր գաղափարներով տոգորված բժիշկները Կովկասի ծանր պայմաններում ձգտում էին անել իրենցից կախված ամեն ինչ, որպեսզի բարելավվեր ժողովրդի առողջապահության ծանր վիճակը։ Լավ ըմբռնելով, որ այդ ուղղությամբ ցարիզմից շատ բան չի կարելի սպասել, նրանք աշխատում էին ամեն հարցում հանդես բերել իրենց նախաձեռնությունը։ Այդ ուղղությամբ նրանց նախաձեռնություններից մեկն էլ ջանքերի միավորման փորձն էր՝ հանձին Կովկասյան բժշկական ընկերության ստեղծման, որի հետ նրանք կապում էին իրենց ամենալավագույն հույսերը։

Կովկասյան բժշկական ընկերության հիմնադիր անդամների մեջ էին նաև Ռուսաստանում իրենց բարձրագույն կրթությունը ստացած մի խումբ հայ բժիշկներ՝ Ս. Ա. Ամիրովը, Ս. Ե. Բաստամովը, Գ. Օ. Վասակովը, Դ. Խ. Լիսիցկը, Մ. Դ. Ռոտինյանցը, Գ. Բ. Տեր-Ասատուրովը և ուրիշներ, ինչպես նաև բժշկության դոկտորներ Ա. Ի. Հովհաննիսյանը, Ի. Ա. Մարկուզովը և Մ. Մ. Տեր-Գրիկուրովը։

Ընկերության բաղմատարր կազմում, նրա ամբողջ գոյության ընթացքում զգալի տեղ էին գրավում առաջավոր գաղափարներով տոգորված, ռուս, հայ, վրացի, ադրբեջանցի և այլ ազգերի պատկանող բժշկական գործիչները։

Սկսած անցյալ դարի 60-ական թվականներից Կովկասում ծառայած բժիշկների ուշադրությունը ուղղվում էր դեպի Կովկասյան բժշկական ընկերությունը։ Այդ ընկերության անդամ են դառնում ոչ միայն կովկասյան քաղաքների, այլև հեռավոր գյուղական վայրերում աշխատող բժիշկները, որոնք իմա-

նալով, որ Կովկասում գոյություն ունի մի կենտրոն, որը խրախուսում է գիտական հետազոտությունները, քննարկում ու հրատարակում այն, կովկասյան բժիշկներից շատ շատերը այդ թվում նաև հայ բժիշկները հանդես են գալիս գիտական բնույթի աշխատանքներով։ Կովկասյան բժշկական ընկերությունը ամեն կերպ խթանում էր Կովկասում ծառայող բժիշկների հետազոտական աշխատանքների ստեղծման գործը։ Բանն այնտեղ է հասնում, որ ընկերությունը անդամ է ընդունում միայն այն բժշկին, որը ընկերությանն է ներկայացնում գիտական զեկուցում կամ հաղորդում։ Կովկասում ծառայող հարյուրավոր բժիշկներ իրենց կատարած գիտական աշխատանքների հրատարակության, քննարկման, իսկ բազմաթիվ դեպքերում հենց դրանց կատարման համար մեծ մասամբ պարտական են այդ ընկերության եռանդուն գործունեությանը։

Առանց չափազանցության մեջ ընկնելու վտանգի, կարելի է պնդել, որ Կովկասում ծառայած բժիշկների, այդ թվում նաև հայ բժիշկների գիտական հետազոտությունների պատմության մեջ Կովկասյան բժշկական ընկերության ստեղծումը նոր ժամանակաշրջանի սկիզբ էր։

Կովկասյան բժշկական ընկերությունը հենց իր ստեղծման պրոցեսում առանձնահատուկ ուշադրություն դարձրեց երկրամասային պաթոլոգիայի հետազոտման հարցերին, այն համարելով իր հիմնական խնդիրներից մեկը։ Կովկասյան բժիշկները սկսեցին լրջորեն ուսումնասիրել իրենց ծառայած վայրերում երկրամասային պաթոլոգիայի հետ կապված հարցերը, մասնավորապես մալարիան։ Այդ հետազոտությունները հնարավորություն տվեցին, այս կամ այն չափով ամբողջական պատկերացում կազմելու Կովկասում երկրամասային պաթոլոգիայի տարածվածության, բնույթի, ինչպես նաև դրա դեմ պայքարի միջոցառումների մասին։

Ընկերությունն իր կարևորագույն խնդիրներից մեկն էր համարում պայքարը հեքիմների և շառլատանների դեմ։ Այդ շատ ակտուալ հարց էր, քանի որ բուժական գործը Կովկասում դեռևս զգալի չափով մնում էր հեքիմների, ինչպես նաև իրանա-թուրքական ստրապետությունից ծանր ժառանգություն մնացած շառլատանության կրողների՝ ռացիոնալ բժշկության հետ ոչ մի կապ չունեցող խաբեբաների ձեռքում։

Հենց սկզբից ընկերությունը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում ժողովրդական լայն խավերի մեջ բժշկական գիտելիքների տարածման գործին։

Այսպիսով, հենց իր ստեղծման պրոցեսում ընկերությունը իր առջև դնում էր շատ կարևոր և ակտուալ խնդիրներ, որոնք ամբողջովին ուղղված էին ժողովրդի առողջապահության գործը բարելավելու և բժիշկների որակավորումը բարձրացնելու վեհ նպատակներին։

Իր հետագա գործունեության ընթացքում, կախված կոնկրետ պայմաններից, ընկերությունը առաջ էր քաշում կյանքի պահանջներից բխող նոր և կարևոր հարցեր։

Բնորոշ է այն հանգամանքը, որ ընկերությունը հանդիսացավ կովկասյան բժիշկների համատեղ ջանքերի միավորման այլ ձևերի սկզբնավորողը։ Խոսքը մասնավորապես վերաբերվում է կովկասյան բժիշկների համագումարների սկզբնավորմանը։ Մինչև 1892 թ. Կովկասում ծառայող բժիշկները չեն ունեցել իրենց համագումարը, մի փաստ, որ ավելորդ անգամ բա-

ցահայտում է կովկասյան իշխանությունների անհոգի վերաբերմունքը Կովկասում բժշկական գործի նկատմամբ։ Մյուս կողմից ցարիզմը նպատակահարմար չի համարել այդպիսի համագումարի գումարումը Կովկասում վախենալով, որ այդտեղ կբացահայտվի առողջապահության գործում եղած համատարած ծանր վիճակը, ցարիզմի անհոգությունը այդ գործի նկատմամբ և կձևավորվի բժիշկների պայքարը իբրև միավորված ջանքերի պայքար, հանուն ժողովրդի առողջապահության գործի։ Այդ վիճակը տևել է երկար, բայց մի դեպք փոխեց նրա ընթացքը։ 1892 թվի խոլերան մեծ զոհեր տարավ Կովկասում։

1892 թ. նոյեմբերի 2-ին կովկասյան բժշկական ընկերության երկու իսկական անդամներ—Գ. Ն. Ստեփանյանը և Մ. Զ. Ավթանդիլովը դիմեցին այդ ընկերությանը մի հայտարարությամբ, որի մեջ նրանք առաջ էին քաշում Կովկասյան բժիշկների համագումարի գումարման անհրաժեշտությունը և հանգամանորեն պատճառաբանում էին այն։ Նրանք իրենց հայտարարությունը ավարտում էին հետևյալ խոսքերով «թերևս առաջին համագումարի փորձը և օգուտը կհամոզի մեզ այդպիսի համագումարների ճիշտ և պարբերական կազմակերպման անհրաժեշտության մեջ...»[1]։

Կովկասյան բժշկական ընկերությունը պատրաստակամությամբ մոտեցավ այդ առաջարկին և իր վրա վերցրեց կովկասյան բժիշկների առաջին համագումարի կազմակերպման նախաձեռնությունը։

Այդ շրջանում կովկասյան բժշկական ընկերությունը հարց հարուցեց Կովկասի ադմինիստրացիայի առաջ համագումար հավաքելու թույլտվության մասին, այն պատճառաբանելով իբրև անհրաժեշտություն, խոլերայի հնարավոր հետագա արշավանքների դեմ պայքարելու համար։

Խոլերայի համաճարակի սարսափի թարմ տպավորության տակ ցարիզմը դեմ չեղավ համագումարի գումարմանը։ Այսպես սկիզբ առան Կովկասյան բժշկական համագումարները, որոնք անջնջելի հետք են թողել երկրամասի բժշկության պատմության մեջ։ Առաջին համագումարը, ինչպես վերն արդեն ասվեց, նվիրված էր խոլերայի հարցերին։ Կարդացված բազմաթիվ զեկուցումները ակնհայտ կերպով բացահայտեցին Կովկասի բժշկական գործի ծանր խոցերը, բժշկա-սանիտարական վիճակի մեծ թերությունները։ Ձևավորվեց և առաջ քաշվեց դրանց դեմ պայքարի հիմնական հարցերը, թեպետ խոլերայի դեմ պայքարի ուղղության անվան տակ։

Այսպիսով, 60-ական թվականների կեսերին, Կովկասյան բժիշկների ջանքերի միավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները հող նախապատրաստեցին, որպեսզի դարավերջին կովկասյան բժիշկները հանդես գային կազմակերպված ձևով, ժողովրդական առողջապահության գործի ասպարեզում ջանքերի կուռ միավորումով։

Կովկասյան բժշկական ընկերությունը մեծ ստիմուլ էր, որի արդյունքը եղավ Կովկասում ծառայող բազմաթիվ բժիշկների գիտական գործունեության աշխուժացումը։

Այն յուրատեսակ գիտա-կազմակերպչական կենտրոն էր, որը առաջ էր քաշում այն պրոբլեմները, որոնք ավելի ակտուալ էին և պահանջում էին իրենց

---

[1] Протокол заседания имп. Кавказского медицинского общества от 2 ноября 1892 года, № 10, стр. 339.

լուծումը, դրանց վրա էին սրում Կովկասի բժիշկների ուշադրությունը և փաստորեն շնորհիվ Կովկասյան բժշկական ընկերության Կովկասում ծառայած բժիշկների գիտական կյանքը նոր ժամանակաշրջան ապրեց։

Ամենից առաջ, շնորհիվ Կովկասյան բժշկական ընկերության, բժիշկները արդեն հստակ պատկերացում ունեին այն կարևորագույն պրոբլեմների վերաբերյալ, որոնք տեղական լինելով հանդերձ, ընդհանուր էին Կովկասի համար և դրանց վերլուծությամբ կարող էին օժանդակել այս կամ այն հարցի լուծմանը։ Կովկասյան բժշկական ընկերության ստեղծումը ցաք ու ցրիվ, գիտական տեսակետից կազմակերպչական ոլորտներից դուրս բժիշկների համար փաստորեն նոր դարաշրջան էր։ Բժիշկը արդեն գիտեր, թե ինչով պետք է զբաղվել, նա գիտեր, որ իր գիտական զբաղմունքի արդյունքը չի կորչի, որ նա հետաքրքրում է որևէ մեկին, որ դա քննարկման առարկա կդառնա, կհրապարակվի, որ նույնիսկ կօգնի գործին։ Սա շատ մեծ ստիմուլ էր, որի հետևանքով, շատ կարճ ժամանակամիջոցում, Կովկասյան բժշկական ընկերության ստեղծումից հետո, Կովկասում գործող բժիշկների գիտական աշխատանքները մեծ քանակով աճեցին։ Իր գործունեության ամբողջ ընթացքում այդ ընկերությունը շատ օժանդակեց Կովկասում ծառայող բժիշկների գիտական գործունեության զարգացմանը։

Ի տարբերություն համալսարանական քաղաքների գիտական ընկերությունների, Կովկասյան բժշկական ընկերությունը ունեցել է իր յուրահատկությունը այն տեսակետից, որ եթե համալսարանական քաղաքների գիտական մտքի հիմնական կենտրոնները հանդիսանում էին համալսարանի բազմաթիվ ամբիոնները, որտեղ կենտրոնացված էր գիտական միտքը և որտեղ բժշկական ընկերությունները ավելի շատ կատարված աշխատանքների հրապարակման և քննարկման կենտրոններ էին հանդիսանում, ապա Կովկասյան բժշկական ընկերությունը շատ ավելի լայն կոչում ուներ։ Կովկասում չկար բժշկական բարձրագույն դպրոց, երկար տարիներ չկային նաև գիտական մտքի մեծ օջախներ և երբ հետագայում դրանք ստեղծվեցին, ապա իրենց տեսակարար կշռով ու դերով մեծ չէին և Կովկասյան բժշկական ընկերությունը պետք է հանդես գար իբրև գիտական-կազմակերպչական, գիտական հրապարակումների, դիսկուսիաների և գիտական ինֆորմացիոն կենտրոն։ Այսպիսի բարդ ու դժվարին դերը Կովկասյան բժշկական ընկերությունը պատվով կատարեց շնորհիվ այն բանի, որ նրա աշխատանքներում շատ ակտիվ մասնակցություն ունեցան Կովկասում ծառայող բժիշկները անկախ իրենց ազգային պատկանելությունից։ Այդ բժիշկների նախաձեռնության շնորհիվ էր, որ Կովկասյան բժշկական ընկերությունը կարողացավ իրագործել իր դերը։

Կովկասյան բժշկական ընկերությունը նաև բժշկական մտքի դաստիարակության յուրատեսակ դպրոց էր Կովկասում ծառայող բժիշկների համար։ Խոսքը վերաբերվում է բժշկական գիտական մտքին և եթե հետևենք այն արձանագրություններին, որոնք տալիս են գիտական հաղորդումները, նրանց շուրջը եղած մտքերի փոխանակումը և նախագահողի ամփոփման խոսքերը, ապա միայն կարելի է հիանալ, թե ինչպիսի բարեխիղճ և մանրազնին ձևով են գնահատվել գիտական աշխատանքները հեռավոր Կովկասում։ Կատարված դիտողությունները չեն կրել մակերեսային բնույթ, այլ լուրջ մասնագիտական վեճերի են հասցրել, որ օգնել է բացահայտելու գիտական ճշմարտությունը։ Այս ամենը որոշակի չափով օժանդակել է կովկասցիների, Կովկասում ծառա-

յող բժիշկների գիտական հետազոտությունների կուլտուրայի աճին։ Թերևս դրան ենք պարտական այն բանով, որ 19-րդ դարի 2-րդ կեսի և 20-րդ դարի սկզբի Կովկասում բժշկական գիտական մտքի հետազոտությունները մի շարք դեպքերում ոչ միայն նշանակություն ունեին Ռուսաստանյան մասշտաբով, այլ իրենց հետազոտությունների արժեքով հասնում էին նաև միջազգային մասշտաբների։ Կովկասյան բժշկական ընկերությունը այնքան բազմազան ծառայություններ է մատուցել, որ դժվար է սպառել նրա գործունեության վերաբերյալ միտքը։ Կովկասյան բժշկական ընկերությունը գիտական անգնահատելի դեր խաղաց, փաստորեն օժանդակեց որպեսզի բժշկի մոտ միշտ վառ մնա հետազոտական կրակը, ըստ որում հետազոտությունը եթե ոչ ամբողջովին, ապա հիմնականում գնաց դեպի պրակտիկա, բխեց պրակտիկայից և ծառայեց պրակտիկային դրա մեջ էր նրա ակտուալությունը։ Դրանցից շատերը այսօր զուտ պատմական արժեք են ներկայացնում։ Սակայն դրանց մի զգալի մասը հանդիսանում են այս կամ այն պրոբլեմի, մասնավորապես տեղական պաթոլոգիայի հարցերի նախապատմություն և պատմություն, առանց որի անհնար է պատկերացնել այն հայացքների զարգացումը, որոնք ունեցել են այդ հարցերի վերաբերյալ, տեղում ծառայող բժիշկները։ Եթե դրան ավելացնենք այն միջոցառումները, որ վերաբերվում են համագումարներին, Կովկասյան բժշկական ընկերության հրատարակություններին, ապա այդ պատկերը շատ ավելի հարուստ կդառնա։ Փաստորեն բժշկական մամուլից զուրկ Կովկասը, Կովկասյան բժշկական ընկերության արձանագրությունների, աշխատությունների և ժողովածուների միջոցով Ռուսաստանի և միջազգային բժշկական հասարակայնությանն էր ներկայացնում Կովկասի բժիշկների հետազոտությունների արդյունքները։ Այդ ամենից հետո պատահական չէ, որ ռուս նշանավոր գիտնականները, այդ թվում Ի. Պ. Պավլովը, Վ. Մ. Բեխտերևը բարձր են գնահատել ընկերության գործունեությունը[1], իսկ «Վրաչ» հանդեսը նրան համարել է ամենագործոն բժշկական ընկերությունը[2]։

Կովկասյան բժշկական ընկերության գործունեությանը շատ ակտիվ մասնակցություն են ցույց տվել Թիֆլիսաբնակ բժիշկները, այդ թվում նաև հայ բժիշկներ Ա. Ն. Բաբայանը, Ս. Ս. Իստամանյանը, Վ. Մ. Արծրունին, Լ. Ա. Հովհաննիսյանը, Գ. Հ. Արեշյանը, Գ. Ա. Մելքոնյանը, Գ. Ս. Պանդոևը, Ն. Զ. Ումիկովը և շատ ուրիշներ։

Կովկասյան բժշկական ընկերության գործունեությանը ակտիվորեն մասնակցել են նաև այն բժիշկները, որոնք գտնվել են Թիֆլիսից հեռու, Կովկասի տարբեր ծայրամասերում, որը զալիս է ասելու, թե այդ բժիշկների ձգտումն էր չկտրվել բժշկության պրոգրեսից։

Թիֆլիսում ընկերության նիստերի այդ աշխատանքները լսվում էին, վերլուծվում, ապա հրատարակվում այդ ընկերության աշխատությունների ժողովածուներում։ Այսպիսով, Կովկասյան բժշկական ընկերությունը իր ընդգրկման սահմաններով շատ ավելի լայն մասշտաբներ ուներ և դրանով նա տարբերվում էր բազմաթիվ այլ բժշկական ընկերությունների գործունեությու-

---

[1] Протокол торжественного юбилейного заседания в день празднования пятидесятилетия имп. Кавказского медицинского общества от 20 апреля 1914 г., № 18, стр. 295, 296.

2. Хроника и мелкия известия. «Врач», 1889 г., № 10, стр. 262.

նից։ Դա թեպետև շատ դժվարեցնում էր այդ ընկերության գործունեությունը, բայց միևնույն ժամանակ դարձնում էր շատ արժեքավոր, ընդգրկման մասշտաբով լայն և նշանակալից։

Հրատարակված հոդվածներին բնորոշ է այն հանգամանքը, որ նրանցում չկային կամ շատ քիչ էին այն հետազոտությունները, որոնք ուղղակի կապված չլինեին պրակտիկայի հետ, որոնք թելադրված չլինեին պրակտիկայի կողմից և չծառայեին պրակտիկային։ Բնորոշ է նաև, որ դրանց մեծ մասը, որոնք առաջարկում էին այս կամ այն բարելավում, կապված էին պետական միջոցառումների հետ և համարյա անիրագործելի մնաց։ Ցարական ադմինիստրացիան բոլորովին անտարբեր գտնվեց այդ աշխատությունների նկատմամբ։

Այսպիսով Կովկասյան բժշկական ընկերությունը հանդիսացավ նախահեղափոխական Կովկասի բժշկագիտական մտքի առաջին և ամենալուրջ կենտրոնը, Ռուսաստանի բժշկական ընկերությունների մեջ ամենագործոններից և ամենալավագույններից մեկը, որն իր ժամանակին հսկայական և անգերազանցելի դեր խաղաց Կովկասի, այդ թվում նաև հայ բժիշկների կյանքում և հանդիսացավ ռուս և կովկասյան ժողովուրդների բժշկական կապերի ամենանշանավոր օղակներից մեկը։

Հայկական պետական ֆիզիկական
կուլտուրայի ինստիտուտի ֆիզիոլոգիայի
ամբիոն

Ստացված է 5/III 1965 թ.

А. А. ЛАЛАЯН

## КАВКАЗСКОЕ МЕДИЦИНСКОЕ ОБЩЕСТВО И МЕДИЦИНА В АРМЕНИИ

### Резюме

60-е годы XIX века для кавказских врачей, в том числе для армян-врачей, ознаменовались первым серьезным шагом в объединении усилий—созданием Кавказского медицинского общества.

Кавказское медицинское общество явилось первым и самым серьезным центром врачебно-научной мысли дореволюционного Кавказа, одним из самых деятельных и лучших медицинских обществ России, которое в свое время сыграло огромную роль в развитии медицины Кавказа, в том числе и Армении, и явилось одним из важных звеньев медицинских связей между русским и кавказскими народами.